ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱՐԱՏԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՇՈՐ ԵՎ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕГРЯН ГУРГЕН АРАРАТОВИЧ

ОСОБЕННОСТИ ЗАКЛЮЧЕНИЯ ХОЗЯЙСТВЕННЫМИ ОБЩЕСТВАМИ КРУПНЫХ СДЕЛОК И СДЕЛОК С ЗАИНТЕРЕСОВАННОСТЬЮ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности:
12.00.03 - Частное право: гражданское право; торговое (коммерческое)
право; международное частное право; семейное право; трудовое право;
право социального обеспечения

ЕРЕВАН - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Ա. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիսի 8-ին՝ ժամը 12^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:
Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունիսի 7-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղարի պաշտոնակատար,
իրավ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор В.Д. Аветисян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Т.К. Барсегян

кандидат юридических наук, доцент Н.А. Карапетян

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита состоится 8-го июля 2016г. в 12^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 7-го июня 2016 года.

Исполняющий обязанностей ученого секретаря
специализированного совета,
доктор юридических наук, профессор А.Г. Вагаршян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսական շրջանառության մեջ գործարքի ինստիտուտը խիստ կարևոր է, քանի որ այն իրավաբանական անձնաց, նրանց և քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների համագործակցության հիմնական միջոցն է. վերջինիս վերաբերյալ իրավակարգավորումների պատշաճ մակարդակը ոչ միայն տնտեսական ընկերությունների, այլ նաև ընդհանրապես քաղաքացիական շրջանառության ու երկրի տնտեսության կայուն զարգացման կարևորագույն գրավականներից է:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հասարակական գիտակցության մեջ բազմաթիվ արժեքների վերաիմաստավորման և փոփոխման հետևանքով առաջացավ տնտեսական նոր հարաբերություններին համարժեք իրավական կարգավորման անհրաժեշտություն, ուստի երկրում իրականացված դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում Հայաստանի Հանրապետության 1998 թ. քաղաքացիական օրենսգրքի և դրահիման վրա ընդունված մի շարք այլ իրավական ակտերով ի ընդունմամբ իրավական համակարգում ներդրվեցին քաղաքացիաիրավական բազմաթիվ նոր հասկացություններ, իրավական կառուցակարգեր և ինստիտուտներ, որոնց շարքում ուրույն տեղ զբաղեցրին տնտեսական ընկերությունների և դրանց մասնակիցների հարաբերությունները կանոնակարգող կորպորատիվ-իրավական ինստիտուտները:

Տնտեսական ընկերությունների կարգավիճակի իրավական ամրագրումը ՀՀ-ում բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ մեծ թվով ընկերությունների ձևավորման խթան հանդիսացավ: Վերջիններս տարբեր խումբ սուբյեկտների՝ ընկերության, նրա մասնակիցների, ղեկավար մարմինների, պարտատերերի և այլոց շահերի բախման ոլորտ է: Նշված սուբյեկտների շահերը հավասարակշռելու, ընկերության գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումն ապահովելու, ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներ ստեղծելու և տնտեսական ընկերության մասնակցությամբ հարաբերությունների կայունությունն ապահովելու նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում նախատեսված են խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու վերաբերյալ հատուկ նորմեր, որոնք առավելապես ուղղված են ընկերության գործադիր մարմնի կողմից ընկերությունից

խոշոր ակտիվներ դուրսհանելու ու «փոշիացնելու» քայլերը խոչընդոտելուն, ինչպես նաև սահմանված կարգի խախտմամբ կնքված գործարքների վիճարկման և մինչև նման գործարքի կնքումը եղած դրությունը վերականգնելու համար անհրաժեշտ գործունկառուցակարգեր սահմանելուն:

Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտի հիմքում օրենսդիրը դրել է շուկայական առաջադեմ տնտեսություն ունեցող երկրներում ժամանակի փորձությունն անցած այն հիմնարար գաղափարը, որ քննարկվող գործարքների հատկանիշներ ունեցող իրավաբանական գործողությունները կարող են կատարվել առավելապես կորպորացիայի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ՝ այդ կերպ ապահովելով այդպիսի գործարքի կնքման հարցում միասնական կամքի ձևավորումը: Ինչպես ցույց են տալիս զարգացած երկրների փորձը և ՀՀ գործող կորպորատիվ օրենսդրության կիրառման պրակտիկան, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքմանն ուղղված կամք ձևավորելու լիարժեք ու հավասարակշռված կառուցակարգերի, նշված գործարքների կնքման կարգը խախտելու հետևանքների, այն խախտած անձանց պատասխանատվության արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ իրավակարգավորումների ոչ պատշաճ մակարդակն ու հատկապես դրանց բացակայությունը կարող են հանգեցնել ոչ միայն այդպիսի գործարքների հետագա վիճարկման, այլ նաև պարարտ հող ստեղծել կորպորատիվ կոնֆլիտների առաջացման, ընկերությունից ակտիվների հանցավոր դուրսբերման, կեղծ կամ կանխամտածված սնակության, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց «ոչ ընկերական կլանման» և նմանատիպ այլ ոչ իրավաչափ արարքների կատարման համար: Այս բացասական երևույթները խաթարում են երկրի տնտեսական դրությունը, հասարակության մեջ ստեղծում անվստահության մթնոլորտ, նվազեցնում բիզնեսում ներդրումներ կատարելու գրավչությունը:

Անկասկած, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ դրույթների մանրակրկիտ մշակվածությունը և դրանց հետևողական կիրառումը հույժ կարևոր են ինչպես ամեն առանձին վերցրած տնտեսական ընկերության, այնպես էլ բոլոր տնտեսվարող սուբյեկտների ու երկրի տնտեսական անվտանգության ապահովման գործում: Նշվածը վկայում է այն մասին, որ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտների խորը և բազմակողմանի հետազոտությունը՝ հիմնված թեմային վերաբերող տեսական, նորմատիվ աղբյուրների և էմպիրիկ նյութի համակարգային վերլուծության, ինչպես նաև օտարերկրյա լավագույն փորձի ամփոփման վրա, թույլ կտա վեր հա-

նել տեսության մեջ և պրակտիկայում առկա բազմաթիվ վիճահարույց հարցերն ու գործնական խնդիրները, որոնց լուծումը կորպորատիվ հարաբերությունների և տնտեսական ընկերությունների կողմից կնքվող գործարքներից բխող հարաբերությունների իրավական կարգավորումը կատարելագործելու առումով չափազանց կարևոր նշանակություն կարող է ունենալ:

Թեմայի արդիականության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխում («Իրավաբանական անձինք») փոփոխություններ կատարելու հայեցակարգը, ինչպես նաև վերջինիս հիման վրա մշակված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որոնք առաջարկում են կորպորատիվ հարաբերություններին, այդ թվում նաև՝ հետազոտության թեմային առնչվող մի շարք խնդիրների հայեցակարգային բնույթի նորովի լուծումներ, որոնք անկասկած իրենց հետագա ազդեցությունը կունենան «Բաժնետիրական ընկերություններ մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների՝ խոշոր և շահագրգռվածություն պարունակող գործարքները կանոնակարգող նորմերի վերաիմաստավորման ու կատարելագործման ուղիների մշակման վրա:

Այսպիսով, թեմայի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն ուսումնասիրության առարկահարցերի տեսական ու գործնական կարևորությամբ, այլ նաև գործող քաղաքացիական օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխություններն իմաստավորելու, դրանք հնարավորինս խորը և բազմակողմանի վերլուծության ենթարկելու և օրենսդրության հետագա զարգացման ուղիներ նախանշելու անհրաժեշտությամբ:

Թեմայի մշակվածության աստիճանը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շուկայական տնտեսությունների ձևավորման դժվարին ճանապարհին իրավաբանական միտքը էապես վերաիմաստավորեց տնտեսական հարաբերությունները միջնորդավորող բազմաթիվ ինստիտուտների և կառուցակարգերի դերն ու նշանակությունը, ինչի շնորհիվ տնտեսական ընկերությունները ձեռք բերեցին նոր կարգավիճակ: Որպես հետևանք, դրանց ստեղծման, գործունեության, դադարման, քաղաքացիաիրավական կարգավիճակի, քաղաքացիական շրջանառության մասնակցության առանձնահատկությունների հիմնախնդիրները դարձան նաև քաղաքացիա-

գետների գիտական հետաքրքրությունների, բավականին լուրջ բանավեճերի և քննարկումների առարկա: Բացառություն չեն նաև տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքները, որոնց վերաբերող հարցերին իրենց ուսումնասիրություններում, դասագրքերում, գիտական հոդվածներում ու այլ աշխատանքներում արնդրադարձել են ռուսաստանցի այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Վ.Ա. Բելովը, Ա.Վ. Գաբովը, Օ.Վ. Գուտնիկովը, Վ.Վ. Զալեսկին, Ե.Ա. Իգնատովան, Դ.Վ. Լոմակինը, Ա.Ա. Մակովսկայան, Ս.Դ. Մոգիլևսկին, Օ.Ն. Սադիկովը, Մ.Վ. Տելյուկիանան, Մ.Յու. Տիխոմիրովը, Ի.Ծ. Ֆաիզուտդինովը և այլք:

Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հիմնահարցերի վերաբերյալ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հետխորհրդային շրջանի հեղինակներ Ս.Դ. Մագիլևսկին (Մոսկվա, 2001 թ.), Ե.Վ. Մորդասովը (Մոսկվա, 2004 թ.), Կ.Է. Կիլինան (Մոսկվա, 2006 թ.), Գ.Ս. Վասիլևը (Վոլգոգրադ, 2006 թ.), Լ.Օ. Կոնդրատենկոն (Մոսկվա, 2007 թ.), Ի.Պ. Պուշկարյովը (Չելյաբինսկ, 2008 թ.), Ս.Ա. Բուռլակովը (Մոսկվա, 2010 թ.), Մ.Ն. Իլյուշինան (Մոսկվա, 2012 թ.):

Հայ իրականության մեջ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտին գրեթե չեն անդրադարձել: Թերևս բացառություն է Վ.Դ. Ավետիսյանը, որն իր՝ «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության (Եր., 2014 թ.), նույնանուն մենագրության (Եր., 2014 թ.) և «Բաժնետիրական իրավունք» ուսումնական ձեռնարկի (Եր., 2005 թ.) շրջանակներում ներկայացրել է քննարկվող հիմնախնդրի և դրա հետ առնչվող մի շարք վիճահարույց հարցերի վերաբերյալ իր գիտական տեսակետները և առաջադեմ երկրների լավագույն փորձը: Ուշագրավ է նաև Դ.Մ. Սերոբյանի՝ «Բաժնետոմսերի շրջանառության իրավական կարգավորումն արժեթղթերի շուկայում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (Եր., 2005 թ.), որտեղ հեղինակն անդրադարձել է սույն ատենախոսության թեմային վերաբերող որոշ հիմնահարցերի:

Այնուհանդերձ, չնայած վերը հիշատակված հետազոտությունների մեծ քանակին, հարկ է նկատել, որ հայ իրականության մեջ բացակայում է բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների, դրանց կնքման և վիճարկման կարգի վերաբերյալ համակողմանի գիտական հետազոտություն, որը, վեր հանելով թեմային վերաբերող և պրակտիկայում հայտնված բազմաթիվ խնդիրներն ու դրանց լուծման հիմնական ուղիները, կարող է

քննարկվող հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման տեսական հենք դառնալ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության ***նպատակը*** բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացության և առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց կնքման մասին որոշումներ կայացնելու, դրանց անվավերության վերաբերյալ տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ ***խնդիրները.***

- ուսումնասիրել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների էությունը, հատկանիշները, վերհանել վերջիններիս բովանդակությունը և սահմանել խոշոր ու շահագրգռվածությամբ գործարքների հասկացությունները.
- վերլուծել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումների ընդունման ընթացակարգերը.
- ներկայացնել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումներ կայացնելիս ընկերության ղեկավար մարմինների համագործակցության մեխանիզմները.
- առանձին-առանձին ուսումնասիրել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վիճարկման ընթացակարգերը, ինչպես նաև գործարքների վիճարկման դեպքում ընկերության կոնտրագենտների շահերի պաշտպանության հարցերը.
- վերհանել նշված գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը.
- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ օրենսդրական դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններ են, որոնք ծագում են տնտեսական ընկերության կողմից խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու ընթացքում, ինչպես նաև այդ կապակցությամբ ընկերության, նրա մասնակիցների և երրորդ անձանց միջև ծագող իրավահարաբերությունները:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան: Ուսումնասիրության առարկա են «Բաժնետիրական ընկերությունների

մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների, այլ երկրների կորպորատիվ օրենսդրության՝ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներին նվիրված նորմերը, ինչպես նաև ՀՀ-ի և այլ երկրների դատական ու գործարարական պրակտիկայի նյութերը: Հետազոտության առարկան ընդգրկում է նաև տնտեսական ընկերությունների քաղաքացիաիրավական կարգավիճակին և նրանց կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների իրավական կարգավորման հիմնախնդիրներին վերաբերող հայ և օտարազգի քաղաքացիագետների տեսական հետազոտությունները:

Ատենախոսության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքում ամփոփված են իրավունքի տեսության, քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները, ներառյալ՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունները: Հաշվի առնելով ամերիկյան և եվրոպական երկրներում կորպորատիվ իրավունքի ոլորտում ձևավորված բավականին հարուստ փորձը և թեմային վերաբերող արժեքավոր աղբյուրների առկայությունը՝ հատուկ ուշադրություն է դարձվել նաև վերջիններիս ուսումնասիրությանը: Հետազոտությունն իրականացնելիս մասնավորապես ուսումնասիրվել են Ա.Կանի, Դևիդ Ս.Դոնալդի, Է.Հիքի, Ս.Գունի, Հ.Հենի, Ջ.Ալեքսանդրի, Դ.Կերշոունի, Ն.Բևանսի, Ռ.Կրակմանի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ-իրավական հենք են հանդիսացել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքմանն ու վիճարկմանը առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ-ի, ՌԴ-ի և ԱՊՀ մի շարք այլ երկրների օրենքները, «Ընկերությունների մասին» 1985 թ. և 2006 թ. Մեծ Բրիտանիայի օրենքը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 1996 թ. ԱՄՆ համընդհանուր ակտը, Ֆրանսիայի «Առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը, Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» 1965 թ. օրենքը և այլն:

Հետազոտության էմպիրիկ հիմք են հանդիսացել ատենախոսության շրջանակներում քննարկված որոշ հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերը, ՌԴ բարձրագույն դատական ատյանների որոշումներն ու պարզաբանումները, ինչպես նաև ՀՀ և այլ երկրների դատական և գործարարական պրակտիկայի նյութե-

ը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության հստակ նպատակներով ու խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատաիրավական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորիս համալիր և բազմակողմանի վերլուծվել են տնտեսական ընկերությունների, մասնավորապես բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների էությունը, բովանդակությունը, առանձնահատկությունները, կնքման և վիճարկման կարգն ու առանձնահատկությունները: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսության շրջանակներում կատարվել են մի շարք տեսական եզրահանգումներ, առաջարկվել են գիտության մեջ և դատական պրակտիկայում ծագած մի շարք բանավեճային հարցերի լուծման և քննարկվող ինստիտուտների վերաբերյալ օրենսդրության դրույթների կատարելագործման ուղիներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլվում է ստորև շարադրված և պաշտպանության ներկայացվող դրույթներում, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներում, որոնք ամփոփ ներկայացված են սույն աշխատանքի վերջաբանում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Տնտեսական ընկերությունների առանձին տեսակների կողմից կնքվող խոշոր գործարքների էության, հատկանիշների և առանձնահատկությունների վերլուծության և ընդհանրացման, քննարկվող տեսակի գործարքների վերաբերյալ ձևավորված տեսությունների և դիրքորոշումների ուսումնասիրության և ամփոփման, ՀՀ-ի և մի շարք այլ երկրների օրենսդրությունների առանձին նորմերի համադրական վերլուծության հիման վրա հիմնավորվել է այն տեսակետը, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար խոշոր գործարքների միմյանցից տարբերվող հասկացությունների, ներառյալ գործարքն այդպիսին որակելու տարբերակված չափանիշների օրենսդրական ամրագրումը ոչնչով արդարացված չէ: Ըստ այդմ առաջարկվել է խոշոր գործարք համարել մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապ-

վածեն ընկերության կողմից գույքի, աշխատանքների ու ծառայությունների, տեղեկատվության, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքների օտարման կամ օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ գերազանցում է օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված չափը:

2. Բաժնետիրական ընկերությունների ղեկավար մարմինների միջև համագործակցության մեխանիզմների բարելավման և ընկերության մասնակիցների՝ ընկերության ղեկավարմանը անմիջական մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման նպատակով ճիշտ կլինի գործադիր մարմնին հնարավորություն ընձեռել ընդհանուր ժողովի օրակարգ ներառել այնպիսի գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցեր, որոնց առարկայի արժեքը կազմում է ընկերության զուտ ակտիվների 25-ից 50 տոկոսը, և որոնց շուրջ խորհուրդը չի կարողացել միաձայն որոշման հանգել, ինչպես նաև այն գործարքները, որոնց առարկա հանդսացող գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը:

3. Փոխկապակցված (աֆիլացված) անձանց շրջանակը հստակեցնելու նպատակով գրականության մեջ առկա տեսակետների համալիր վերլուծության և արտասահմանյան երկրների փորձի հիման վրա արտահայտվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ գործարքների կնքման հարցում պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց կազմից նպատակահարմար կլինի հանել բաժնետիրական ընկերությունների բաժնետերերին և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցներին:

4. Հիմնավորվել է այն գաղափարը, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքների համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումն այն դեպքերում, երբ ընկերության և մյուս կողմի միջև կնքվող գործարքները հրապարակային են, այլ կերպասած՝ կնքվում են հրապարակային օֆերտայի հիման վրա:

5. Դատարանների կողմից շահագրգռվածությամբ գործարքի անվավերության վերաբերյալ հայցապահանջներ քննելիս, եթե որպես հայցի հիմք հանդես է գալիս շահագրգռված անձի՝ գործարքի կնքման մասին որոշում կայացնելու կապակցությամբ անցկացված քվեարկությանը մասնակցելու փաստը, ապա այդպի-

սի գործարքները կարող են ճանաչվել անվավեր միայն այն դեպքում, երբ տվյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցելն ունեցել է վճռորոշ նշանակություն:

6. Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու սուբյեկտների շրջանակը հստակեցնելու նպատակով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներում անհրաժեշտ է հստակ սահմանել այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են դատարան ներկայացնելու ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ: Աշխատանքում հիմնավորվել է, որ քննարկվող գործարքներն անվավեր ճանաչելու մասին հայցապահանջ ներկայացնելու իրավունք պետք է ունենա բացառապես այն տնտեսական ընկերությունը կամ նրա մասնակիցը, ի շահ որի սահմանված են համապատասխան սահմանափակումները:

7. Բաժնետիրական ընկերությունների պարագայում նպատակահարմար կլինի սահմանել, որ ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումը չի պահանջվում շահագրգռվածությամբ գործարքներ կատարելու համար, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու հարցում շահագրգիռ անձը ճանաչվում է այդպիսին (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողով կամ խորհրդի նիստանցկացնելու օրը):

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է հայ իրավագիտության մեջ տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացության, հատկանիշների, կնքման և վիճարկման կարգի ուսումնասիրությանը նվիրված համալիր աշխատանք, որի արդյունքները կարող են օգտակար լինել թեմայի և դրան առնչվող մի շարք հիմնախնդիրների հետագա գիտական հետազոտություններում: Բացի այդ, ատենախոսության նյութը կարող է օգտագործվել բուհերի և հատուկ դպրոցների ունկնդիրներին կորպորատիվ իրավունք կամ իրավաբանական անձանց վերաբերյալ մի շարք հատուկ դասընթացներ դասավանդելու, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ պատրաստելու ընթացքում:

Թեմայի շրջանակներում քննարկված հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործ-

վել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը և օգտակար լինել օրենքների միատեսակ կիրառմանն ուղղված նախադեպային ակտերի մշակման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում, որտեղ այն քննարկվել է ու երաշխավորվել պաշտպանության: Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքներն արտացոլվում են հեղինակի հրատարակած չորս գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր հանդեսներում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսը ներկայացրել է զեկուցումների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երկուական պարագրաֆներով, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից: Աշխատանքն ունի 166 համակարգչային էջ ծավալ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, դրատեսական, իրավական և փորձառական հիմքերը, ցույց են տրվել ուսումնասիրության մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, անդրադարձ է կատարվել հետազոտության արդյունքների փորձարկմանը, աշխատանքի կառուցվածքին ու ծավալին:

Առաջին գլուխը՝ **«Տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքները և դրանց կնքման կարգը»** վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի **«Խոշոր գործարքների հասկացությունն ու հատկանիշները»** վերտառությամբ առաջին պարագրաֆում վերլուծվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված խոշոր գործարքների հասկացությունը, հատկանիշները և իրավական բնույթը:

Հայաստանյան իրավական համակարգում ներդրված «խոշոր գործարքների» իրավական ինստիտուտը, որը նախատեսում է նման գործարքների կնքման առանձնահատուկ կարգ, կոչված է ապահովելու ընկերության գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը, սահմանափակելու

ընկերության գործադիր մարմնի իրավասություններն ընկերության գույքի տնօրինման հարցում և պաշտպանելու ընկերության մասնակիցներին ընկերությունից առանց նրանց իմացության խոշոր ակտիվներ դուրսբերելու հնարավոր դեպքերից:

Չնայած խոշոր գործարքների վերաբերյալ օրենսդրության բավականին տևական գոյությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքները սահմանում են խոշոր գործարքների միմյանցից տարբերվող սահմանումներ և կարգավորումներ, որպիսի հանգամանքը գիտականորեն հիմնավորված չի թվում և հիմնականում պայմանավորված է այն իրողությամբ, որ նշված օրենքները մշակելիս համապատասխան աշխատանքային խմբերի կողմից միասնական մոտեցում չի ցուցաբերվել: Բացի այդ, խոշոր գործարքի վերաբերյալ սահմանումները ձևակերպված են այնպիսի հասկացությունների միջոցով, որոնց բովանդակությունն օրենսդիրը չի բացահայտել: Արդյունքում այդ հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս և լուրջ դժվարություններ են ստեղծում գործարքները որպես խոշոր որակելիս: Դրանց շարքում կարելի է առանձնացնել «գործարքների փոխկապակցվածություն» և «առօրյա տնտեսական գործունեություն» հասկացությունները, որոնք աշխատանքի շրջանակներում ենթարկվել են հնարավորինս խորը և բազմակողմանի վերլուծության:

Հիմնավորվել է նաև այն գաղափարը, որ օրենսդրի կողմից որպես խոշոր գործարքների առարկա բացառապես «գույք»-ը դիտարկելը ոչնչով արդարացված չէ, և խոշոր գործարքների հնարավոր առարկա հարկ է համարել նաև աշխատանքներն ու ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները:

Խոշոր գործարքների վերաբերյալ օրենսդրական նորմերի և դրանց կիրառման պրակտիկայի վերլուծության հիման վրա, ինչպես նաև ելնելով իրար հարազատ կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերությունների կողմից գործարքների կնքման կարգը սահմանող նորմերը հնարավորինս միասնականացնելու անհրաժեշտությունից՝ եզրակացություն է արվել, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար նպատակահարմար կլինի ձևակերպել խոշոր գործարքների մեկ միասնական սահմանում: Ընդ որում, քաղաքացիական շրջանառությունում խոշոր գործարքի հասկացության միատեսակ ընկալումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ հիմնավորվել է այն տեսակետը, որ խոշոր գոր-

ծարքի հասկացությունը սահմանելիս թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին», թե՛ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում ճիշտ կլինի նախատեսել գործարքն այդպիսին որակելու նույնական չափանիշներ:

Առաջին գլխի **«Խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումների կայացման կարգը»** վերտառությամբ երկրորդ պարագրաֆը նվիրված է ընկերության համապատասխան մարմինների կողմից խոշոր գործարքներ կնքելու համար անհրաժեշտ կամքի ձևավորման ու արտահայտման կառուցակարգերին:

Տնտեսական ընկերությունների կամքի ձևավորումը, այդ թվում նաև՝ խոշոր գործարքներ կնքելիս, իրականացվում է ընկերության՝ կամք ձևավորելու իրավասություն ունեցող մարմինների գործունեության ընթացքում, որն արտահայտվում է վերջիններիս կողմից նիստերի անցկացմամբ և դրանց ընթացքում մասնակիցների կողմից օրակարգում առկա հարցերի վերաբերյալ քվեարկությամբ: Գործարք կնքելու նպատակով տնտեսական ընկերությունների մասնակիցների քվեարկությանը մասնակցելու (կամ վերջիններիս կամահայտնության) և այդպիսի քվեարկության արդյունքներն ամփոփելու միջոցով ձևավորվում է ընկերության ներքին կամքը:

Խոշոր գործարքների կնքմանն ուղղված որոշումների կայացման վերաբերյալ ընկերության ղեկավար մարմինների միջև համագործակցության գործում որպես էական բացթողում մատնանշվել է այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերությունների պարագայում միանձնյա ղեկավար մարմինը զրկված է խոշոր գործարքների կնքման վերաբերյալ հարցերը ժողովի օրակարգում ինքնուրույն ներառելու հնարավորությունից, ինչը կորպորատիվ պրակտիկայում հաճախ առաջացնում է փակուղային իրավիճակներ: Համեմատության համար նշենք, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում գործադիր մարմինն այդպիսի իրավասությամբ օժտված է: Այդ առումով առաջարկվել է բաժնետիրական ընկերության գործադիր մարմնին հնարավորություն ընձեռել ընդհանուր ժողովի օրակարգ ներառել այնպիսի գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցեր, որոնց առարկայի արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, և որոնց շուրջ խորհուրդը չի կարողացել միաձայն որոշման հանգել, ինչպես նաև այն գործարքները, որոնց առարկա հանդսացող գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը:

Ելնելով այն իրողությունից, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը չի սահմանում, թե ձայների ինչ հարաբերակցությամբ են խորհրդի կող-

մից ընդունվում խոշոր գործարքների կատարման մասին որոշումները, ինչպես նաև նկատի առնելով այս հարցում օրենսդրական կարգավորումների միասնականացման անհրաժեշտությունը՝ առաջարկվել է բաժնետիրական ընկերությունների օրինակով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածում սահմանել, որ խորհրդի կողմից որոշումներն ընդունվում են միաձայն (իհարկե, հաշվի չառնելով խորհրդից դուրս եկած անդամների ձայները):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածը, սահմանելով խոշոր գործարքների կնքման վերաբերյալ բաժնետիրական ընկերության խորհրդի կողմից որոշումներ կայացնելու կարգը, չի պարզաբանում, թե ովքեր են համարվում խորհրդից դուրս եկած անդամներ: Աշխատանքում հիմնավորվել է այն տեսակետը, որ այդպիսիք պետք է համարել այն անդամներին, ում լիազորությունները վաղաժամկետ դադարել են, ինչպես նաև մահացածներին, դատարանի վճռով անհայտ բացակայող, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչված անձանց:

Կարծիք է արտահայտվել, որ ելնելով տարբեր կազմակերպությունների առանձնահատկություններից սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների օրինակով բաժնետիրական ընկերություններին նույնպես կարելի է օժտել խոշոր գործարքների օրենքով նախատեսված սահմանաչափը փոփոխելու հնարավորությամբ:

Խոշոր գործարք կնքելու մասին որոշումների բովանդակության հարցը վերլուծելիս հիմնավորվել է այն տեսակետը, որ խոշոր գործարքների կատարման մասին ցանկացած որոշում, անկախ այն բանից՝ ընդունվել է ընդհանուր ժողովի, թե խորհրդի կողմից, պետք է նշում պարունակի գործարքի առարկայի, դրա կողմերի ու շահառուների, գործարքի արժեքի և Քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածով սահմանված գործարքի մյուս էական պայմանների մասին:

Երկրորդ գլուխը՝ «Տնտեսական ընկերությունների կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքների և դրանց կնքման կարգի առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի **«Շահագրգռվածությամբ գործարքների հասկացությունն ու առանձնահատկությունները»** վերտառությամբ առաջին պարագրաֆում մանրամասն ուսումնասիրվել են շահագրգռվածություն պարունակող գործարքների հասկացությունը, շահագրգիռ համարվող անձանց շրջանակը և առանձնահատկությունները:

Շահագրգռվածությամբ գործարքների հիմքում նույնպես օրենսդիրը դրել է այն գաղափարը, որ պետք է բացառվի ընկերության վրա հնարավոր ազդեցություն ունեցող և անձնական շահերով առաջնորդվող անձանց կողմից ընկերությունից խոշոր ակտիվներ դուրս բերելու հնարավորությունը:

Պարագրաֆի շրջանակներում համեմատական վերլուծության են ենթարկվել բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող գործարքներում պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակը: Տվյալ հարցի կարգավորման մասով համեմատահրավական վերլուծության ենթարկելով տարբեր առաջադեմ տնտեսություն ունեցող երկրների օրենսդրությունները՝ ատենախոսը նկատում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է շահագրգռված անձանց աննախադեպլայն շրջանակ, ինչն այնքան էլ արդարացված չէ: Շահագրգռվածությամբ գործաքների էության, ինչպես նաև փոխկապակցված անձանց հնարավոր շրջանակի հետազոտության արդյունքում հիմնավորվել է վերջիններիս կազմից տնտեսական ընկերությունների մասնակիցներին (բաժնետերերին) հանելու անհրաժեշտությունը:

Օրենսդիրը սահմանում է, որ եթե գործարքը միաժամանակ խոշոր է և շահագրգռված կիրառվում են երկու տեսակ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթները: Հաշվի առնելով դրանց միաժամանակյա կիրառման աննպատակահարմարությունը, իսկ առանձին դեպքերում նաև՝ անհնարինությունը, առաջարկվել է նման դեպքերում նախատեսել շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կարգավորող դրույթները կիրառելու անհրաժեշտությունը:

Պարագրաֆի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև այն իրավիճակներին, երբ շահագրգռվածություն պարունակող գործարքները բաժնետիրական ընկերությունների կողմից կնքվում են առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում: Բացի այդ վերլուծվել են նաև այլ դեպքեր, երբ շահագրգռվածությամբ գործարքներ կնքելիս չպետք է պահանջվի ընկերության համապատասխան մարմնի որոշումը: Արդյունքում ներկայացվել են օրենսդրության կատարելագործման մի շարք առաջարկներ:

Երկրորդ գլխի **«Շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումների կայացման կարգը»** վերտառությամբ երկրորդ պարագրաֆում հետազոտվել են շահագրգռվածությամբ գործարքների կնքման վերաբերյալ տնտեսական ընկերությունների համապատասխան մարմինների կողմից կամքի ձևավորման և կամահայտնության մեխանիզմները:

Վերլուծության են ենթարկվել համապատասխան մարմինների կողմից շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումների կայացման առանձնահատկությունները, անրաժեշտ ձայների հարաբերացությունն ու այդ մարմինների համագործակցության առանձնահատկությունները:

Հեղինակն անդրադարձ է կատարել օրենքով չկարգավորված, սակայն պրակտիկայում ոչ հազվադեպ, այն իրավիճակներին, երբ բաժնետիրական ընկերությունում շահագրգռվածությամբ գործարք կատարելու մասին որոշում կայացնելիս գործարքի կնքման մեջ չշահագրգռված է համարվում խորհրդի միայն մեկ անդամ կամ խորհրդի անկախ անդամ է համարվում միայն մեկ անձ: Անհրաժեշտ է համարվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխել և սահմանել, որ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը նաև այն դեպքերում, երբ գործարքի կնքմամբ չշահագրգռված կամ խորհրդի ակնախ անդամ են համարվում 3-ից պակաս անդամներ:

Կարծիք է արտահայտվել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն խորհրդի նիստին մասնակցող անդամների կողմից:

Ելնելով քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելու նկատառումներից՝ տեսակետ է արտահայտվել, որ շահագրգռված անձանց քվեարկությանը մասնակցելու հիմքով գործարքի անվավերության վերաբերյալ հայցապահանջներ քննելիս դատարանները պետք է հաշվի առնեն՝ արդյոք այդ անձի քվեն ունեցել է վճռորոշ նշանակություն, թե ոչ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի՝ շահագրգռվածությամբ գործարքների և դրանց կնքման մասին որոշումների կայացումը կարգավորող 47-րդ հոդվածում ոչինչ չի ասվում ընկերությունում խորհուրդ ձևավորված լինելու դեպքում վերջինիս հնարավոր իրավասությունների մասին: Հեղինակը կարծիք է հայտնել, որ ընկերությունում խորհուրդ ձևավորված լինելու դեպքում հարկ է ընկերություններին հնարավորություն ընձեռել կանոնադրությամբ սահմանելու, որ քննարկվող գործարքների կնքման մասին որոշումները կարող է կայացնել ընկերության խորհուրդը, ինչպես նաև սահմանել վերջինիս կողմից որոշումների կայացման անրաժեշտ ընթացակարգերը:

Երրորդ գլուխը՝ «Տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերությունը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի **«Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վիճարկման կարգն ու առանձնահատկությունները»** վերտառությամբ առաջին պարագրաֆում քննարկվել են խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վավերության, դրանք անվավեր ճանաչելու կարգի և առանձնահատկությունների վերաբերյալ որոշ խնդիրներ:

Պարագրաֆի շրջանակում ընդգծվել է խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմն անորոշ լինելու հանգամանքը: Առաջարկվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների համապատասխան հոդվածներում հստակ սահմանել քննարկվող գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Անդրադարձ է կատարվել տնտեսական ընկերությունների մասնակիցների կողմից կնքված գործարքներն անվավեր ճանաչելու և այդպիսի գործարքների կնքմամբ պատճառված վնասը հատուցելու պահանջներ ներկայացնելու առանձնահատկություններին: Արտահայտվել է տեսակետ, համաձայն որի՝ տնտեսական ընկերության մասնակիցները քննարկվող գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջներով ներկայացնում են այսպես կոչված անուղղակի հայցեր, որոնց պարագայում նրանք չեն կրում դատարանում իրենց իրավունքների և օրինական շահերի խախտման փաստն ապացուցելու բեռ:

Տարանջատվել և վերլուծության են ենթարկվել գործարքների անվավերության հիմքերն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 315-րդ և 305-րդ հոդվածների: Քննարկվել են ընկերության կոնտրագենտների իրավունքների և շահերի պաշտպանվածության մակարդակը, փորձ է կատարվել մշակել վերջիններիս շահերի պաշտպանության գործուներաշխիքներ:

Երրորդ գլխի **«Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների ու այդ իրավունքի իրականացման ժամկետների առանձնահատկությունները»** վերտառությամբ երկրորդ պարագրաֆում դիտարկվել են խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի իրականացման մի շարք տեսական և կիրառական բնույթի խնդիրներ:

Ատենախոսության մեջ անհամաձայնություն է արտահայտվում այն հեղինակների դիրքորոշմանը, որոնք մերժում են ընկերության նոր մասնակցի՝ մինչև ընկերությունում բաժնե-

մաս (բաժնետոմս) ձեռք բերելն ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքները վիճարկելու իրավունքը: Հետևություն է արվում, որ հայցապահանջ ներկայացնելու իրավունքն ընկերության մասնակցի հիմնական իրավունքներից է, որը բաժնեմասը (բաժնետոմսը) փոխանցելիս սինգուլյար իրավահաջորդության կարգով անցնում է նոր մասնակցին: Նույն տրամաբանությամբ իր՝ որպես ընկերության մասնակցի կարգավիճակը կորցրած անձը կորցնում է նաև ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքը:

Վերլուծության են ենթարկվել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների (ընկերության և նրա մասնակիցների) կողմից իրենց իրավունքն իրականացնելու ժամկետների հիմնախնդիրը: Ամփոփելով վերջինիս վերաբերյալ գրականության մեջ առկա տեսակետները և վերլուծելով առաջադեմ երկրների լավագույն փորձը՝ եզրակացություն է արվում, որ տնտեսական ընկերության գործադիր մարմնի փոփոխման դեպքերում մինչև այդ ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի իրականացման հայցային վաղեմության ժամկետը պետք է սկսի հոսել ոչ թե այն պահից, երբ նոր ղեկավարությունն է իմացել օրենքի խախտմամբ կնքված գործարքների մասին, այլ այն պահից, երբ այդ մասին իմացել է ընկերությունը՝ թեկուզև ի դեմս հին ղեկավարության: Առաջարկվել է նույնանման մոտեցում ցուցաբերել նաև ընկերության նոր մասնակիցների կողմից խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վիճարկման պարագայում:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ընդհանրացվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունները, որոնք ամփոփհանգում են հետևյալին:

▪ Գործարքների փոխկապակցվածության չափանիշներից ոչ մեկն առանձին վերցրած բացարձակ նշանակություն ունենալ չի կարող և պետք է դիտարկվի առկա մյուս չափանիշների հետ միասին: Փոխկապակցված պետք է համարել տնտեսական ընկերության կողմից կնքվող այն գործարքները, որոնց կնքումը պայմանավորված է նախկինում կամ միաժամանակ կնքվող այլ գործարքով, ինչպես նաև այն գործարքները, որոնք կնքվում են միասեռ գույքի վերաբերյալ տարբեր անձանց հետ կարճ ժամա-

նակահատվածում, կամ տարաբնույթ գույքի վերաբերյալ մեկ անձի կամ այդ անձին փոխկապակցված այլ անձանց հետ՝ թեկուզև տարբեր ժամանակահատվածներում, սակայն երբ ենթադրվում է այդ գործարքների առարկա գույքի օգտագործումը միևնույն նպատակային նշանակությամբ:

▪ Տնտեսական ընկերությունները՝ որպես կանոնադրական իրավունակությամբ օժտված առևտրային կազմակերպություններ, իրավասու են կնքելու իրենց կանոնադրային նպատակներից բխող և օրենքով չարգելված ցանկացած գործարք, այդ պատճառով ամեն առանձին վերցրած դեպքում տվյալ տնտեսական ընկերությունն ինքը պետք է որոշի՝ արդյոք կնքվող գործարքը առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում է, թե ոչ:

▪ Գույքի անհատույց ձեռքբերման գործարքները, անկախ գործարքի առարկա գույքի արժեքից, միշտ կնքվում են ի շահ գույքը ձեռք բերող տնտեսական ընկերության: Ուստի նշված բնույթի գործարքների կնքումն ավելի նպատակահարմար կլինի թողնել գործադիր մարմնի ղեկավարի բացառիկ իրավասության ներքո: Հաշվի առնելով այն իրողությունը, որ հատուցելի գործարքների դեպքում գույքի ձեռքբերումը միշտ զուգորդվում է այլ գույքի օտարմամբ, կարծում ենք՝ հատուցելի գործարքների միջոցով գույքի ձեռքբերումը որպես խոշոր գործարքների չափանիշ դիտարկելը ոչնչով հիմնավորված չէ:

▪ Լիովին նպատակահարմար է թվում տնտեսական ընկերության կողմից կնքվող գործարքները, որոնց առարկա աշխատանքներն ու ծառայությունները, մտավոր սեփականությունը կամ քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները, որոնց արժեքը գերազանցում է գործարք կնքող ընկերության ակտիվների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված չափը, նույնպես դասել խոշոր և շահագրգռվածությամբ կնքված գործարքների շարքին:

▪ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում, եթե ընկերությունում խորհուրդ է ձևավորվել, շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը կանոնադրությամբ խորհրդին հանձնելու հնարավորության նախատեսված չլինելը ոչնչով արդարացված չէ: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածը հարկ է փոփոխել և սահմանել, որ ընկերությունում խորհուրդ ձևավորված լինելու դեպքում կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումները, որոնց առարկայի արժեքը կամ գործարքով վճարման ենթակա գումարը չեն գերազանցում ընկերության ակտիվների հաշ-

վեկշռային արժեքի 10 տոկոսը (շեմը կարող է փոփոխվել ժողովի որոշմամբ), կայացվում են ընկերության խորհրդի կողմից:

▪ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթը հարկ է փոփոխել և սահմանել. «Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածություն, միևնույն ժամանակ ընկերության գույքի օտարման խոշոր գործարք է հանդիսանում, ապադրակնքումն իրականացվում է՝ շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթներին համաձայն»: Նույնանման դրույթ է պետք ներառել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում:

▪ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասը ճիշտ կլինի փոփոխել և սահմանել, որ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը նաև այն դեպքերում, երբ գործարքի կնքման մեջ չշահագրգռված կամ խորհրդի ակնախանդամ են համարվում խորհրդի երեքից պակաս անդամներ: Հակառակ պարագայում՝ գործարքի կատարման մասին որոշման իրավասությունը փոխանցվում է ընդհանուր ժողովին:

▪ Անրաժեշտ է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին ընկերության խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող և գործարքի կնքման մեջ շահագրգռված չհամարվող խորհրդի անդամների կողմից:

▪ Ճիշտ կլինի որպեսզի բաժնետիրական ընկերություններին հնարավորություն տրվի իրենց կանոնադրությամբ սահմանելու շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու հարցը ժողովի քննարկմանը հանձնելու համար անհրաժեշտ՝ գործարքի առարկայի արժեքի կամ գործարքով վճարման ենթակա գումարի այլ սահմանաչափ:

▪ Ընկերության մասնակիցները կամ ընկերությունը, խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ գործերում հանդես գալով որպես հայցվոր, չպետք է կրեն վիճարկելի գործարքներով իրենց իրավունքներն ու օրինական շահերը խախտված լինելու փաստն ապացուցելու բեռը:

▪ Խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակը հստակեցնելու նպատակով անրաժեշտ է սահմանել, որ իր՝ որպես ընկերության մասնակցի կարգավիճակը կորցրած անձը չունի ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք: Ընկերության

մասնակցի կողմից մեկ այլ անձի՝ նոր մասնակցի ընկերության բաժնեմասերը (բաժնետոմսերը) փոխանցելիս սինգուլյար իրավահաջորդության կարգով վերջինիս է անցնում նաև ընկերության կողմից նախկինում կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքը:

▪ Տնտեսական ընկերության գործադիր մարմնի փոփոխման դեպքերում մինչև այդ ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի իրականացման հայցային վաղեմության ժամկետը պետք է սկսի հոսել ոչ թե այն պահից, երբ նոր ղեկավարությունն է իմացել օրենքի խախտմամբ կնքված գործարքների մասին, այլ այն պահից, երբ այդ մասին իմացել է ընկերությունը՝ թեկուզև դեմս հին ղեկավարության: Առաջարկվել է նույնանման մոտեցում ցուցաբերել նաև ընկերության նոր մասնակիցների կողմից խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վիճարկման պարագայում:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Մեղրյան Գ., Խոշոր գործարքի հասկացությունը և հատկանիշները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 260-282 էջեր:
2. Մեղրյան Գ., Տնտեսական ընկերությունների կողմից շահագրգռվածությամբ գործարքների կնքումն առանց համապատասխան մարմինների որոշման, Պետություն և իրավունք, Եր., 2016, թիվ 1 (71), 60-67 էջեր:
3. Մեղրյան Գ., Տնտեսական ընկերությունների կողմից շահագրգռվածությամբ գործարքների կնքման որոշ առանձնահատկությունների վերաբերյալ, Դատական իշխանություն, Եր., 2016, թիվ 4-5 (202-203), ապրիլ-մայիս, 50-57 էջեր:
4. Մեղրյան Գ., Սերոբյան Դ., Տնտեսական ընկերությունների գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հարցի շուրջ, Դատական իշխանություն, Եր., 2016, թիվ 4-5 (202-203), ապրիլ-մայիս, 58-62 էջեր:

МЕГРЯН ГУРГЕН АРАРАТОВИЧ

ОСОБЕННОСТИ ЗАКЛЮЧЕНИЯ ХОЗЯЙСТВЕННЫМИ ОБЩЕСТВАМИ КРУПНЫХ СДЕЛОК И СДЕЛОК С ЗАИНТЕРЕСОВАННОСТЬЮ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук посвящена изучению проблем правового регулирования порядка заключения органами управления хозяйственных обществ крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность.

После распада СССР и провозглашения независимости союзных республик гражданский оборот на постсоветском пространстве претерпел значительные изменения, связанные с переходом к рыночной системе, необходимостью адекватного регулирования новых экономических отношений и внедрением в гражданское законодательство новых понятий, правовых механизмов и институтов. Среди последних особое место занимают хозяйственные общества и корпоротивно-правовые институты, регулирующие отношения общества и его участников. В результате ряда изменений в гражданско-правовом регулировании правового положения субъектов гражданского права возникли новые виды сделок со специальным правовым порядком заключения. К ним относятся крупные сделки и сделки, в совершении которых имеется заинтересованность конкретных лиц, обладающих реальной возможностью влиять на их заключение. Учитывая то обстоятельство, что в результате совершения подобных сделок может возникнуть конфликт интересов общества, органов его управления, участников (акционеров), аффилированных лиц и кредиторов, в законодательстве Республики Армения определен особый порядок совершения и одобрения крупных сделок и сделок с заинтересованностью. Это обусловлено необходимостью обеспечения рационального управления имуществом общества, исключения возможности получения членами органов управления общества и иными заинтересованными лицами выгоды, сопряженной с нарушением интересов общества, прав и интересов акционеров (участников) общества, а также создания сбалансированных и эффективных механизмов оспаривания рассматриваемых сделок.

Проблемы заключения крупных сделок и сделок с заинтересованностью в настоящее время активно рассматриваются в трудах цивилистов. В рамках диссертационных исследований они исследовались как отечественными, так и зарубежными авторами. Тем не менее предусмотренные гражданским законодательством институты крупных сделок и сделок с заинтересованностью в армянской действительности недостаточно изучены. Не существует всесторонних научных работ относительно данного вопроса, что обусловлено

фактом постоянного переосмысления корпоративных правоотношений в рамках непрекращающихся изменений гражданского законодательства.

Исходя из актуальности темы, целью настоящего диссертационного исследования стало системное изучение и анализ норм действующего гражданского законодательства РА и зарубежных стран, работ ученых-цивилистов, обобщение судебной и корпоративной практики, выявление проблем правового регулирования порядка заключения и одобрения органами управления общества крупных сделок и сделок с заинтересованностью, выработка теоретических и практических предложений по совершенствованию действующего законодательства и практики его применения.

В рамках диссертации проанализированы понятие, признаки и характерные особенности крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность, рассмотрена их правовая природа, проанализированы отечественный российский и зарубежный опыт правового регулирования порядка их заключения, разграничена компетенция органов управления хозяйственных обществ по одобрению сделок, дана правовая характеристика последствий нарушения порядка заключения (одобрения) рассматриваемых сделок, определены особенности процедуры оспаривания сделок с заинтересованностью в связи с нарушением порядка их заключения (одобрения) органами управления, рассмотрены вопросы исчисления срока исковой давности. выявлены некоторые недостатки в правовом регулировании ответственности заинтересованных лиц за причиненные хозяйственному обществу убытки.

В результате исследований, проведенных в рамках диссертации, автором выявлены существующие в рассматриваемых институтах проблемы, на основе проведенного анализа сформулированы предложения по совершенствованию законодательства об акционерных обществах и обществах с ограниченной ответственностью, регулирующего порядок совершения органами управления хозяйственных обществ крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность.

MEGHRYAN GURGEN ARARAT

THE FEATURES OF MAKING MAJOR TRANSACTIONS AND TRANSACTIONS WITH INTEREST BY BUSINESS COMPANIES

The present dissertation to obtain a scientific degree candidate of legal sciences is devoted to scrutinizing the problems of legal regulation of the order for making major transactions and transactions with interest by the governing bodies of business companies.

After the collapse of the USSR and declaration of independence by the former union republics the civil circulation at the post-soviet territory has undergone essential changes due to transition to the market economy, the necessity of adequate regulation of the new economic relations and implication of new concepts, legal mechanisms and institutions in the civil legislation. Among the latter special role is endowed to the business companies and corporate-legal institutions which regulate the relationship between the company and its members. In the result of a range of changes to the civil-legal regulation of the legal status of subjects of the civil law new types of transactions have been formed with a special legal order to make them. Major transactions and transactions for making which certain entities hold an interest and who have a real opportunity to influence making thereof are among those mentioned. Taking into consideration the fact that in the result of making such contracts a conflict of interests may arise between the company, its governing bodies, members (shareholders), affiliated persons and creditors, the legislation of the Republic of Armenia has established a special order of making such transactions and transactions with interest. This is reasoned by the necessity to ensure the reasonable management of the company's assets, to exclude the possibility by the members of governing bodies and other interested persons to obtain profit which is linked to infringement of the company's interests, rights and the interests of the shareholders (members) of the company as well as to establish balanced and effective mechanisms of challenging the contracts at stake.

The problems of making major transactions and transactions with interest nowadays are widely scrutinized by the civilians in their studies. As a matter of dissertation they have been studied both by the national and foreign authors. However, the institutions of the major transactions and transactions with interest set forth in the civil legislation have not been scrutinized sufficiently enough. Comprehensive scientific studies concerning to the given issue do not exist which is connected to the fact of continuous rethinking of the corporate relationships within the ongoing changes of the civil legislation.

Given the actuality of the topic the present dissertation is aimed at scrutinizing and analyzing of the norms of current civil legislation of RA and foreign countries, studies of scientists-civilians, summarizing of the judicial and corporate practice, detecting the problems of legal regulation of the order for making major transactions and transactions with interest by the companies and endorsing thereof by the governing bodies, elaborating theoretical and practical proposals for improvement of the current legislation and practice of its application in a systemic manner.

Within the dissertation the notion, features and characteristic peculiarities of major transactions and transactions with interest are analyzed, the legal nature thereof is examined, the national, Russian and foreign experience of regulation of the order for making those contracts is analyzed, the competences for endorsing the contracts of governing bodies of the business company are delineated, the legal characteristics of the consequences for breach of the order of making (endorsing) the transactions mentioned is set forth, the procedural peculiarities of challenging the transactions with interests in case of breach of the order of making (endorsing) those by the governing bodies are defined, the issues of expiry of the period for bringing an action are studied, several shortcomings in the legal regulation of the liability of interested persons for causing loses to the business company are detected.

In the result of the research conducted within the dissertation the author has detected essential problems in the institutions at stake, based on the analysis carried out proposals for improvement of the legislation on the stock companies and limited liability companies are elaborated which set up the order of making major transactions and transactions with interest by the governing bodies of the business companies.